



Կարգապահական գործ թիվ ԿԳ-17120

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2020 թվականի հուլիսի 7-ի թիվ 80-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԹԻՎ ԿԳ/67-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐՋՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՎԱՐՈՒՅԹ)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ նաև Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ խորհուրդ**), նիստը նախագահող՝ Սիմոն Բաբայանի, խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Սեդրակ Ասատրյանի, Կարեն Մեժլումյանի, Տիգրան Խուրշուդյանի և Կարեն Սարգսյանի կազմով, քարտուղարությամբ՝ Մարիամ Պետրոսյանի, քննության առնելով փաստաբան Դավիթ Գյուրջյանին (արտոնագիր՝ թիվ 1897) (**այսուհետ նաև՝ փաստաբան կամ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքերը.

Խորհրդի 05.04.2018թ. թիվ ԿԳ/62-Ա որոշմամբ (**այսուհետ՝ նաև Որոշում**) փաստաբան Դավիթ Գյուրջյանը ենթարկվել է «նկատողություն» կարգապահական տույժի՝ Պալատի ընդհանուր ժողովի 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ նաև Կանոնագրք**) 4.1 կետի պահանջների խախտման համար:

Որոշումն ուժի մեջ չի մտել, քանի որ Փաստաբանի կողմից բողոքարկվել է դատական կարգով (քաղաքացիական գործ թիվ ԵԴ/25612/02/18):

Պալատի խորհրդի 12.06.2020թ. թիվ 12/11/4-Ա որոշմամբ Խորհրդի 05.04.2018թ. թիվ ԿԳ/62-Ա որոշումը՝ փաստաբան Դավիթ Գյուրջյանին Կանոնագրքի 4.1 կետի խախտման համար կարգապահական պատասխանատվության ենթարկելու (եզրափակիչ մասի 1-ին և 2-րդ-րդ կետերի) մասով անվավեր է ճանաչել:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը

Պալատի նախագահի 09.10.2017թ. թիվ 320-Ա/ԿԳ-17120 որոշմամբ փաստաբան Դավիթ Գյուրջյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով:

Կարգապահական գործը 12.10.2017թ. հանձնվել է Պալատի կարգապահական գործ նախապատրաստող անձ Հունան Բաբայանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցումները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.

Խորհրդի նիստին Դիմողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցվել է Խորհրդի նիստի վայրի, օրվա և ժամի մասին:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

19.10.2017թ. Պատասխանողը ներկայացրել է գրություն, որով հայտնել է, որ բացատրություն տալու կարիք չի տեսնում, քանի որ իր դիրքորոշումը շարադրված է 07.09.2018թ. կազմված «Անձին զննության ենթարկելու վերաբերյալ» արձանագրության մեջ: Պատասխանողը կից ներկայացրել է նշված արձանագրության պատճենը: Նշված արձանագրության ներքո գրավոր հայտարարությամբ է Դավիթ Գյուրջյանը հայտնել է, որ կարգադրիչը իսկապես մետաղադրոսի սարքով արձանագրել է իր պայուսակի մեջ մետաղական մասի առկայություն: Ինքը հայտարարել է, որ այդ մետաղական իրերը գրիչ գլխիկն է և նոթատետրի մետաղական մասը, իսկ կարգադրիչն այնուամենայնիվ պահանջեց հանել դրանք և ցույց տալ կամ ազտվել դրանցից: Ըստ Դավիթ Գյուրջյանի նման պահանջն ակնհայտ անիրավաչափ է, քանի որ դատական կարգադրիչը չունի նման պահանջ ներկայացնելու լիազորություն առաջին հերթին այն պատճառով, որ արգելված իրերի ցանկ օրենքով սահմանված չէ և իրն արգելված չի կարող համարվել բացառապես կարգադրիչի կամայական հայեցողությամբ և երկրորդը այն պատճառով, որ «զննության» կարգ որևէ օրենքով կամ ենթաօրենսդրական ակտով սահմանված չէ, իսկ քանի դեռ օրենքը չի տալիս «զննություն» եզրի բացատրությունը այն պետք է ատանա լեզվաբանական բացատրություն, որը ըստ Աղայանի բառարանի նշանակում է «ուշադիր նայել» և ոչ ուսումնասիրել պայուսակի պարունակությունը կամ այլ առարկայի պարունակությունը: Դավիթ Գյուրջյանն արձանագրել է նաև, որ կարգադրիչների պահանջներն անհիմն են, այսինքն՝ չունեն իրավական հիմք, ուստի ինքը իրաժարվել է դրանք կատարել, ինչի արդյունքում արգելվել է իր մուտքը դատական նիստերի դահլիճ իր աշխատանքային պարագաներով, խոչընդոտվել է իր՝ որպես փաստաբանի, մասնագիտական գործունեությունը և իր պաշտպանյալները մնացել են անպաշտպան ընթացող դատական նիստին:

Խորհրդի նիստին Պատասխանողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցվել է Խորհրդի նիստի վայրի, օրվա և ժամի մասին, պատասխանողի կողմից բացարկի միջնորդություններ են ներկայացվել Խորհրդի անդամներ Մելանյա Առուստամյանին, Սիմոն Բաբայանին, Տարոն Սիմոնյանին, Նելլի Հարությունյանին և Սեդրակ Ասատրյանին՝ որոնք Խորհրդի կողմից մերժվել են¹:

¹ Խորհրդի անդամ Սեդրակ Ասատրյանին հայտնված բացարկի միջնորդությունը չի քննարկվել՝ նկատի ունենալով, որ Խորհրդի անդամը նիստին չի մասնակցել:

3.3. Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Նախապատրաստողը 12.12.2017թ. կազմել է եզրակացություն:

Կարգապահական գործը խորհրդին է հանձնվել 17.06.2020թ-ին: Վերանայման որոշումից հետո կարգապահական նիստը նշանակվել է 07.07.2020թ-ին:

5. Խորհրդի նախորդ որոշումը և վերանայման վարույթ հարուցելու մասին որոշումը.

Խորհրդի 05.04.2018թ. թիվ ԿԳ/62-Ա որոշմամբ (եզրափակիչ մասի 1-ին և 2-րդ կետերով) փաստաբան Դավիթ Գյուրջյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության:

Խորհրդի 12.06.2020թ. թիվ 12/11/4-Ա որոշմամբ թիվ ԿԳ-17120 կարգապահական գործով նոր երևան եկած հանգամանքի հիմքով սկսվել է վերանայման վարույթ (**այսուհետ՝ Վերանայման որոշում**), և խորհրդի 05.04.2018թ. թիվ ԿԳ/62-Ա որոշումը մասնակի՝ եզրափակիչ մասի 1-ին և 2-րդ կետերի մասով ճանաչվել է անվավեր:

6. Խորհրդի նիստը և կողմերի մասնակցությունը

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 07.07.2020թ-ին՝ ժամը 20:20-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ), որին չեն ներկայացել Դիմողը և փաստաբան Դավիթ Գյուրջյանը թեև պատշաճ ծանուցվել էին կարգապահական նիստի վայրի, օրվա և ժամի մասին:

7. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

- Թիվ ԵԷԴ/0050/01/17 քրեական գործով **07.09.2017 թվականին** նշանակված դատական նիստին փաստաբան Դավիթ Գյուրջյանը ներկա չի գտնվել:

- Թիվ ԵԷԴ/0050/01/17 քրեական գործով 07.09.2017 թվականին նշանակված դատական նիստին մասնակցելու համար Դավիթ Գյուրջյանը ներկայացել է դատարան: Դավիթ Գյուրջյանի պայուսակը ձեռքի մետաղաորսիչ սարքի միջոցով դատական կարգադրիչի կողմից զննության է ենթարկվել, որի ընթացքում սարքը մետաղական իրի առկայության մասին ազդանշան է տվել:

- Դատական կարգադրիչի կողմից առաջարկվել է ցույց տալ մետաղական իրը կամ ազատվել դրանից: Դավիթ Գյուրջյանը հրաժարվել է:

- Կարգադրիչն արգելել է Դավիթ Գյուրջյանին մտնել դատական նիստերի դահլիճ:

- Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի ԵԴ/22454/02/18 քաղաքացիական գործով 22.11.2019թ. կայացրած վճռով (այսուհետ՝ Վճիռ) փաստվել է, որ ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 21.07.2011 թվականի թիվ 04-Ն որոշմամբ հաստատված «Դատական կարգադրիչների կողմից դատարան կամ դատական նիստերի դահլիճ մուտք գործող անձանց և նրանց իրերը զննության ենթարկելու» կարգն (այսուհետ՝ Կարգ) առհասարակ չի սահմանել զննման կարգը կամ արգելված իրերի ցանկը, ուստի այն բավարար հստակությամբ չի սահմանել շահագրգիռ անձանցից պահանջվող/ակնկալվող վարքագիծը, ուստի և հնարավորություն չէր տալիս ողջամտորեն կանախատեսել ակնկալվող գործողությունը/անգործությունը և դրանից առաջացող հետևանքները:

- ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի՝ 21.07.2017 թվականի թիվ 15-Լ որոշմամբ (**այսուհետ՝ խորհրդի թիվ 15 որոշում**) որոշվել է՝

1. *Փաստաբաններին զննության ենթարկելու դեպքերի մասով՝*

1.1. *Արձանագրել, որ՝*

- *Փաստաբանները քրեական գործերով արդարադատության կայացման հարցում կարևոր և անփոխարինելի սուբյեկտներ են և պետական ծառայողները պարտավոր են փաստաբանների նկատմամբ ցուցաբերել հարգալից վերաբերմունք՝ ղեկավարվելով փաստաբանի բարեխղճության կանխավարկածով.*

- *Առանց հատուկ սարքերի փաստաբանին զննելու համար դատական կարգադրիչը պետք է ունենա իրավական և փաստական հիմքեր.*

- *Փաստական հիմքը կարող է լինել այն դեպքում, երբ կա ողջամիտ կասկած, որ փաստաբանը կարող է օրենքով արգելված իրեր տեղափոխել.*

- *Անթույլատրելի է զննություն կատարելիս դրսևորել խտրական վերաբերմունք փաստաբանների նկատմամբ.*

- *Չննությունը չի կարող փաստացի վերածվել խուզարկության կամ ստեղծել փաստաբանական գաղտնիքի հրապարակման վրանգ կամ փաստաբանի համար նվաստացուցիչ պայմաններ.*

- *Անթույլատրելի է դատարանի և դատական կարգադրիչների կողմից՝ փաստաբանի մասնագիտական գործունեության իրականացման համար անհրաժեշտ իրերը, այդ թվում՝ անվրանգ տարայով խմելու ջուրը, տեղափոխելու արգելքը:*

1.2. *Առաջարկել ՀՀ դատական դեպարտամենտին՝*

- *Չննությունը կատարել տեխնիկական միջոցներով (սկանավորմամբ)՝ առանց փաստաբաններին լրացուցիչ անհարմարություն պատճառելու.*

- *Փաստական հիմքի առկայությամբ փաստաբանի պայուսակի պարունակությունը զննելու դեպքում (եթե փաստաբանը համաձայնվել է անձամբ ցույց տալ պարունակությունը՝ առանց փաստաթղթերի բովանդակությունը բացահայտելու), փաստաբանի պահանջի դեպքում, զննությունը կատարել առանձին սենյակում՝ համապատասխան սեռի դատական ծառայողների և ընթերականների մասնակցությամբ՝*

արդյունքների վերաբերյալ կազմելով արձանագրություն երկու օրինակից (մեկ օրինակը հանձնելով փաստաբանին)։

- դատական կարգադրիչներին հրահանգել, որ փաստաբանի պայուսակը կամ այլ իրը զննելու դեպքում, դատական կարգադրիչն իրավասու չէ՝ ա) ինքնուրույն որոնողական գործողություններ կատարել, այդ թվում՝ բացել պայուսակը կամ տեղաշարժել պայուսակի մեջ գտնվող իրերը, և բ) որևէ փաստաթղթի բովանդակությանը ծանոթանալ։

2. Կոչ անել փաստաբաններին՝ իրենց վստահորդներին պաշտպանելու հարցում դրսևորել համարձակություն, սկզբունքայնություն և բարեխղճություն՝ պահպանելով Փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները։

3. Ընդունել ի գիտություն, որ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջներին համապատասխան գործող փաստաբանն ունի փաստաբանի գործունեության պաշտպանության օրենքով սահմանված երաշխիքները և ՀՀ փաստաբանների պալատի լիարժեք աջակցությունը։

4. Հանձնարարել ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատարին՝ սույն որոշումն ուղարկել ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարին և ապահովել որոշման հրապարակումը ՀՀ փաստաբանների պալատի կայքում։»։

Խորհրդի թիվ 15-Լ որոշման 3-րդ կետում Խորհուրդն արձանագրել է հետևյալը՝ «ՀՀ դատական օրենսգրքով կամ դատավարական որևէ օրենքով, դատական կարգադրիչների կողմից զննություն կատարելու որևէ կարգ սահմանված չէ։ Նշված օրենքներով սահմանված չէ նաև արգելված իրերի ցանկը։ Իրավական որոշակիության պահանջը հուշում է, որ արգելված իրերի ցանկը պարտադիր է, որպեսզի քաղաքացիներն իրենց վարքագիծը կանխորոշեն։ Օրինակ, իմանան, թե որ դեպքում ինչ իրեր չեն կարող իրենց հետ ունենալ դատարանի շենք մտնելիս։ Հակառակ պարագայում, դատական կարգադրիչները կարող են կամայականորեն անձանց չթույլատրեն ցանկացած իր (նույնիսկ անվտանգ) տեղափոխելու համար։»

- ՀՀ դատարանների նախագահների խորհրդի՝ 11.09.2017 թվականի որոշմամբ կատարվել են փոփոխություններ ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 21.07.2011 թվականի թիվ 04-Ն որոշման մեջ՝ տալով զննության սահմանումը, հստակ ընթացակարգը և ամրագրելով արգելված իրերի ցանկը։ Նշված որոշումն ուժի մեջ է մտել 03.10.2017 թվականին։

8. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 07.07.2020թ. տրված տեղեկանքի համաձայն՝ Դավիթ Գյուրջյանը փաստաբան է հանդիսանում 25.04.2015թ., և 2015-2020թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ 10 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (10 ավարտված վարույթ), որոնց մեջ չի հաշվարկվում սույն կարգապահական գործը։

Պալատի խորհրդի 03.10.2016թ. թիվ ԿԳ/107-Ա, 31.10.2016թ. թիվ ԿԳ/158-Ա, 12.09.2017թ. թիվ ԿԳ/87-Ա, 15.02.2018թ. թիվ ԿԳ/19-Ա, 22.02.2018թ. թիվ ԿԳ/23-Ա, 07.03.2018թ. թիվ ԿԳ/47-Ա, 07.04.2018թ. թիվ ԿԳ/66-Ա որոշումներով Դավիթ Գյուրջյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթները կարճվել են:

Պալատի խորհրդի 05.12.2016թ. թիվ ԿԳ/190-Ա որոշմամբ Դավիթ Գյուրջյանի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ նկատողություն, Կանոնագրքի 5.1.2 և 5.2.1 ենթակետերի խախտման համար և տույժը մարվել է:

Պալատի խորհրդի 13.09.2018թ. թիվ ԿԳ/204-Ա որոշմամբ Դավիթ Գյուրջյանի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ նկատողություն, Կանոնագրքի 4.1 ենթակետերի խախտման համար, որը բողոքարկվել է դատական կարգով:

Պալատի խորհրդի 13.09.2019թ. թիվ ԿԳ/26-Ա որոշմամբ Դավիթ Գյուրջյանի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ նկատողություն, վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականությունը չկատարելու համար, որը բողոքարկվել է դատական կարգով:

9. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Դավիթ Գյուրջյանի նկատմամբ Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման հիմքով կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Պալատի ընդհանուր ժողովի 19.10.2019թ. թիվ 1-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի (այսուհետ նաև՝ **Կարգ**) 6.1.1 ենթակետ 2-ին պարբերության համաձայն՝ **Պալատի խորհուրդը կարծում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝ հիմնավորված չէ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը:**

Վերը նշված փաստերը հաշվի առնելով, Պալատի խորհուրդն արձանագրում է, որ 07.09.2017 թվականի դրությամբ ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 21.07.2011 թվականի թիվ 04-Ն որոշմամբ հաստատված կարգով կամ առհասարակ որևէ այլ նորմատիվ իրավական ակտով սահմանված չի եղել զննության հստակ ընթացակարգը, արգելված իրերի ցանկը, որպիսի պարագայում փաստաբանը չէր կարող դրսևորել կանխատեսելի վարքագիծ, այսինքն՝ ողջամտորեն կանխատեսել ակնկալվող գործողությունը/անգործությունը և դրանից առաջացող հետևանքները:

ՀՀ դատարանների նախագահների խորհրդի՝ 11.09.2017 թվականի որոշմամբ կատարվել են փոփոխություններ ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 21.07.2011 թվականի թիվ 04-Ն որոշման մեջ՝ տալով զննության սահմանումը, հստակ ընթացակարգը և ամրագրելով արգելված իրերի ցանկը, ինչը ևս մեկ անգամ փաստում է Կարգում առկա իրավական անորոշությունը:

Վերոգրյալը հաշվի առնելով և նկատի ունենալով նոր երևան եկած հանգամանքը, Խորհուրդն արձանագրում է, որ հիմնավորված չէ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը:

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի և 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջներով՝

Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Դավիթ Գյուրջյանի (արտոնագիր թիվ 1897) նկատմամբ հարուցված թիվ ԿԳ-17120 կարգապահական վարույթը՝ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման մասով կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել Դիմողին և փաստաբան Դավիթ Գյուրջյանին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝

Սիմոն Բարայան

07 հուլիսի 2020թ.
թիվ ԿԳ/67-Ա
ք. Երևան